Գևորգ Էմին

Գրագողության մասին

"Պարույր Սևակը
սրանից է այս տողը վերցրել,
իսկ սա՝ նրանից ..."
Բայծ դու ի՞նչ գիտես
՞ինչ ես հասկանում
քեզ քո հայհոյած գրո՛ղը տանի ...
Մեղուն մի ծաղկից ա՛յս է վերծնում,
իսկ այն՝ նրանի՛ց,
բայծ նա փոշի է վերցնում միայն
ծաղկից ու ծառից,
իսկ մեղրն ստեղծում ... իր էությունի՛ց,
իր ներքնաշխարհի՛ծ ...
Թե հե՛շտ է փոշուծ մեղր ստեղծել,
դու՛ ել վերցրու՝
կուզես սրանից,
կուեզես նրանի՛ց, -
Ո՞վ է արգելում և կամ քեզ նեղում ...
Բայց ... վերցնես էլ, ի՛նչ պիտի անես,
եթե պոետ չես,
Երգի մեղու չես,
այլ ... իշամեղու՛:
1968-1969